



Հոդվածի հղումը. Բաբայան Վ. (2023), ՀՀ առևտրային բանկերի հիմնական ցուցանիշների համեմատական վերլուծություն, Տնտեսություն և հասարակություն, ՀՊՏՀ, Տնտեսագետ, 3(3), 29-49, DOI: 10.52174/29538114_2023.3-29


Ներկայացվել է խմբագրություն՝ 30.10.2023 թ.

Ուղարկվել է գրախոսության՝ 31.10.2023 թ.

Երաշխավորվել է հրատարակման՝ 25.12.2023 թ.

ՎԱՀԱՆ ԲԱԲԱՅԱՆ

ՀՊՏՀ կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնի դոցենտ, Կնիքային գիտության թեկնածու

 <https://orcid.org/0009-0003-2096-2274>

ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ բանկային համակարգը Կնիքային գիտությունում ունի առաջնային կարևորություն, մասնավորապես՝ կապիտալի շուկայում շրջանառվող արժեթղթերի գերակշիռ մասը բաժին է ընկնում ՀՀ առևտրային բանկերի կողմից թողարկված և ՀՀ կարգավորող շուկայում գրանցված արժեթղթերին, իսկ ՀՀ ֆինանսական համակարգի ակտիվների 83 տոկոսը՝ ՀՀ բանկային համակարգին:

Ներկայացված փաստարկներով էլ կարևորվում է բանկային համակարգի նկատմամբ հանրության զգայունությունը և պետական խիստ կարգավորման քաղաքականությունը:

Հետազոտության շրջանակներում ներկայացվել են ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից Կանոնակարգ 2-ով¹ սահմանված ՀՀ առևտրային բանկերի Կնիքային գիտության նորմատիվները և շահութաբերությունը բնութագրող հիմնական ցուցանիշները: Այնուհետև ներկայացված ցուցանիշների դիտարկման արդյունքում ՀՀ առևտրային բանկերի 2023 թվականի առաջին կիսամյակի ֆինանսական հիմնական ցուցանիշները՝ դրանք համեմատելով 2022 թվականի առաջին կիսամյակի համապատասխան ցուցանիշների հետ:

«Վերլուծություն» բաժնում ներկայացված արդյունքները փաստում են, որ ՀՀ առևտրային բանկերը գործում են ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված Կնիքային գիտության նորմատիվների պահանջներին, սակայն մրահոգության տեսանկյունից են պայմանավորված:

¹ Տե՛ս ՀՀ ԿԲ խորհրդի 09.02.2007 թ. թիվ 39-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ը, <https://www.cba.am/am/SitePages/regbanks.aspx>

մի շարք բանկերի կողմից համապատասխան ռիսկերի կառավարման անկայուն դրսևորումները, որոնք ակնառու և պարկերավոր են դառնում համեմատական վերլուծության համալրեքստում:

ՀՀ բանկային համակարգի վերլուծական տվյալների անընդհատության ապահովման նպատակով նախատեսվում է հեղազոտությունն իրականացնել պարբերաբար՝ ապահովելու վերլուծական տվյալների վիճակագրական շարքերի անընդհատությունը, ինչը լիարժեք պարկերացում կտա բանկերի գործունեության զարգացման միտումների և օրինաչափությունների մասին, ինչպես նաև վիճակագրական շարքերի շահառու կարող են լինել ֆինանսական շուկայի մասնակիցները, բանկերի հաճախորդները և հեղազոտողները:

Հիմնաբառեր. բանկ, ռիսկ, շահութաբերություն, կապիտալի համարժեքություն, իրացվելիություն, խոշոր փոխառու, կապված անձ

JEL: E58, G21
DOI: 10.52174/29538114_2023.3-29

Ներածություն: Բանկային համակարգի հուսալիության և կայունության հիմնախնդիրը մշտապես եղել է պետության ուշադրության կենտրոնում, քանի որ բանկային համակարգին պատմականորեն վերապահված և օրենսդրորեն ամրագրված է տնտեսության իրացվելի ռեսուրսների նկատմամբ առկա պահանջների բավարարման հիմնախնդիրը: Նշված խնդրի լուծման նպատակով բանկային համակարգին տրված է բացառիկ իրավասություն ավանդների ներգրավման և հաշիվների սպասարկման առումով:

ՀՀ ֆինանսական համակարգի ակտիվների գերակա մասը² 31.12.2022 թ. դրությամբ բաժին է ընկել ՀՀ բանկային համակարգին, իսկ վերջինիս ընդհանուր ակտիվները՝ 8,4 տրիլիոն դրամ և պարտավորությունները՝ 7,1 տրիլիոն դրամ³, կազմել են ՀՆԱ համապատասխանաբար՝ 98,7%-ը և 84%-ը⁴:

ՀՀ արժեթղթերի շուկայի «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ հարթակներում՝

- գրանցված 95.7 մլրդ դրամի կորպորատիվ պարտատոմսերի 85,3%-ը բաժին է ընկնում ՀՀ 11 առևտրային բանկերին, 13,2%-ը՝ երկու վարկային կազմակերպություններին, իսկ 1,45%-ը՝ ոչ ֆինանսական կազմակերպություններին⁵,
- գրանցված 128.0 մլրդ դրամի բաժնային արժեթղթերի 80,9%-ը բաժին է ընկնում ՀՀ 4 առևտրային բանկերին⁶:

«Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ հարթակներում գրանցված պարտքային և բաժնային հաշվետու թողարկողների վերոնշյալ կառուցվածքը մտածելու տեղիք է տալիս, որն էլ կարող է առանձին հետազոտության առարկա դառնալ:

² Տե՛ս ՀՀ ԿԲ կայքէջ, Ֆինանսական կայունության հաշվետվություն, 2022, էջ 43, https://www.cba.am/AM/ppperiodicals/Stability_Report_2022.pdf

³ ՀՀ ԿԲ կայքէջ, Ֆինանսական կազմակերպությունների վիճակագրություն, ՀՀ բանկային համակարգի հիմնական հաշվեկշռային ցուցանիշներ, <https://www.cba.am/am/SitePages/statfinorg.aspx>

⁴ Տե՛ս նույն տեղը, ՀՀ բանկային համակարգի ակտիվներ /ՀՆԱ/ և վարկեր /ՀՆԱ/, <https://www.cba.am/am/SitePages/statfinorg.aspx>

⁵ Տե՛ս Հայաստանի ֆոնդային բորսա ԲԲԸ կայքէջ, https://amx.am/am/issuers_list

⁶ Տե՛ս նույն տեղը:

Վերոնշյալ գործոններով և ցուցանիշներով է պայմանավորված ՀՀ բանկային համակարգի նկատմամբ հանրության մեծ հետաքրքրությունը և պետական խիստ կարգավորման մոտեցումը:

Սույն հետազոտության նպատակն է սահմանված կարգով, ըստ ՀՀ առևտրային բանկերի կողմից հրապարակված միջանկյալ հաշվետվություններում գետեղված ցուցանիշների, վերլուծության ավանդական եղանակներով ներկայացնել բանկերի ֆինանսատնտեսական գործունեությունը բնութագրող հիմնական ցուցանիշների շեղումները, միտումները և օրինաչափությունները, ապա դրանց տալ փորձագիտական գնահատական՝ մեկնաբանելով պատճառահետևանքային կապը:

Գրականության ակնարկ: Բանկային համակարգի բոլոր հնարավոր հաճախորդներին միավորում է մեկ ընդհանուր ու, թերևս, կարևորագույն պահանջ՝ բանկային համակարգը պետք է լինի հուսալի և կառավարելի:

Այս պահանջը գերխնդիր է, որն անհրաժեշտ է ապահովել: Ընդ որում, կարևորվում է ինչպես ամբողջ բանկային համակարգի, այնպես էլ առանձին բանկերի հուսալիության ապահովումը:

Տնտեսության մեջ առկա ազատ ֆինանսական միջոցների վերաբաշխումը և բանկային ռեսուրսների ներուժի իրացումից բխող ռիսկերի կառավարումը մշտապես գոյություն ունեցող խնդիր են, որոնց լուծումը պահանջում է հստակ ուղղորդված ու փոխշաղկապված քայլեր:

Ֆինանսական համակարգի կայունության և հուսալիության ապահովման հիմնախնդիրը դասվում է պետության գերակա խնդիրների շարքին: Համաձայն «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի՝ «Կենտրոնական բանկի հիմնական նպատակներն են Հայաստանի Հանրապետությունում գների կայունության և ֆինանսական կայունության ապահովումը»:

ՀՀ կենտրոնական բանկը ֆինանսական կայունության ապահովման շրջանակներում վերահսկում է ՀՀ առևտրային բանկերի գործունեությունը և պարբերաբար հրապարակում է հետազոտական աշխատանքներ՝ տնտեսական գործընթացների մասնակիցներին և հասարակությանը հասանելի դարձնելով ՀՀ ֆինանսական համակարգի կայունության հիմնախնդիրները: Նմանատիպ հետազոտական աշխատանքների շարքին է դասվում ՀՀ կենտրոնական բանկի Ֆինանսական կայունության հաշվետվությունը⁷:

ՀՀ ԿԲ-ն Ֆինանսական կայունության հաշվետվությամբ, մակրոցուցանիշների հիման վրա, ըստ ֆինանսական ոլորտների, ամփոփ ներկայացնում է ֆինանսական համակարգի կայունությունը վտանգող հնարավոր ռիսկերի, ինչպես նաև դրանց դիմակայելու ունակության ընդհանուր գնահատականը:

Հաշվետվությունում ներկայացվում են ոլորտներում ռիսկերի կուտակումները և դրանց հնարավոր ազդեցությունը տնտեսության և ֆինանսական համակարգի բոլոր հատվածների զարգացումների վրա:

Բազելի կոմիտեն⁸ սահմանել է բանկերի կարգավորման մի շարք միջազգային չափորոշիչներ և կարգավորող նորմեր, մասնավորապես՝ կապի-

⁷ ՀՀ ԿԲ կայքէջ, Ֆինանսական կայունության հաշվետվություն, 2022, https://www.cba.am/AM/ppperiodicals/Stability_Report_2022.pdf

⁸ St'u History of the Basel Committee, <https://www.bis.org/bcbs/history.htm>

տալի համարժեքության վերաբերյալ, որոնք, սովորաբար, հայտնի են որպես Բազել I, Բազել II, Բազել III և ամենավերջինը՝ Բազել IV:

Բազելյան կոմիտեի կողմից անդամ երկրներին ներկայացված առաջարկությունները կրում են խորհրդատվական և ոչ պարտադիր բնույթ:

Բազել I: Կապիտալի համաձայնագրով ներկայացվել են կապիտալի սահմանումը և ռիսկի կշիռների կառուցվածքը. որպես նվազագույն հարաբերակցության սահման ընդունվել է 8%-ը:

ՀՀ կենտրոնական բանկը, հիմք ընդունելով Բազելյան կոմիտեի առաջարկությունը, կապիտալի համարժեքության ռիսկի կառավարման գծով սահմանել է երկու տնտեսական նորմատիվներ.

- Ն1/1 - հիմնական կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև սահմանային հարաբերակցությունը սահմանված է նվազագույնը 9% (14.12.2022 թ-ից՝ 6.2%)⁹:
- Ն1/2 - ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև սահմանային հարաբերակցությունը սահմանված է նվազագույնը 12% (14.12.2022 թ-ից՝ 8.3%)¹⁰:

ՀՀ ԿԲ-ի կողմից ընդունված նորմատիվների սահմանաչափի տարբերությունը՝ Բազելյան կոմիտեի առաջարկության հետ համեմատած, պայմանավորված է երկրի տնտեսության առանձնահատկություններով:

Բազել II: Կապիտալի նոր շրջանակը նախագծված է՝ պարզելու, թե ինչպես են կարգավորող կապիտալի պահանջներն արտացոլում հիմքում առկա ռիսկերը և անդրադառնալու վերջին տարիներին տեղի ունեցած ֆինանսական նորամուծություններին: Փոփոխությունների նպատակն է խրախուսել ռիսկերի չափման և վերահսկման շարունակական բարելավումները:

Բազել III: Արձագանքելով 2007-2009 թթ. ֆինանսական ճգնաժամին

Նույնիսկ մինչև Lehman Brothers-ի փլուզումը՝ 2008-ի սեպտեմբերին, ակնհայտ էր դարձել Բազել II-ի շրջանակի հիմնարար ամրապնդման անհրաժեշտությունը: Բանկային հատվածը ֆինանսական ճգնաժամի մեջ մտավ չափազանց մեծ լծակներով և իրացվելիության անբավարար բուֆերներով: Այս թույլ կողմերը ուղեկցվում էին կառավարման հիմնախնդիրներով, ինչպես նաև ոչ պատշաճ խրախուսական կառուցակարգերով: Նշված գործոնների վտանգավոր համակցությունը դրսևորվել է վարկային և իրացվելիության ռիսկերի սխալ գնագոյացմամբ և վարկերի ավելցուկային աճով:

Բազել IV-ը, ըստ էության, ուղղված է Բազել I, Բազել II և Բազել III առաջարկների բարեփոխմանը: Դա նախատեսվում է սկսել 2023 թվականի հունվարի 1-ից¹¹:

Սույն հեղափոխության համար հիմնականում որպես հիմք են ընդունվել ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի թիվ 39-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանո-

⁹ Տե՛ս ՀՀ ԿԲ խորհրդի 15.11.2022 թ. թիվ 195-Ն որոշումը:
¹⁰ Տե՛ս նույն տեղը:
¹¹ Տե՛ս **Daugherty G.**, Economy Introduction To Fiscal Policy “What Is Basel IV?” article, By Updated August 31, 2022, Reviewed by ROBERT C. KELLY, Fact checked by VIKKI VELASQUEZ, <https://www.investopedia.com/basel-iv-5218598>

նակարգ 2-ով սահմանված տնտեսական նորմատիվները¹²: Դրանցից 8-ի վերաբերյալ ամփոփ տեղեկությունը ներկայացվում է աղյուսակի միջոցով:

Աղյուսակ 1

«ՀՀ առևտրային բանկերի համար պեղության կողմից սահմանված տնտեսական նորմատիվներ»¹³

Նորմատիվի անվանումը		Սահմանաչափը
1	Ընդհանուր կապիտալի նվազագույն չափը	30.000.000.000 ՀՀ դրամ
2	Բանկի կապիտալի համարժեքության նորմատիվները	
Ն1/1	հիմնական կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն սահմանային հարաբերակցությունը	9 տոկոս ¹⁴
Ն1/2	ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն սահմանային հարաբերակցությունը	12 տոկոս ¹⁵
3	Բանկի իրացվելիության նորմատիվները	
Ն2/1	բանկի բարձր իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն սահմանային հարաբերակցությունը (ընդհանուր իրացվելիություն)	15 տոկոս
Ն2/2	բանկի բարձր իրացվելի ակտիվների և ցայահանջ պարտավորությունների միջև նվազագույն սահմանային հարաբերակցությունը (ընթացիկ իրացվելիություն)	60 տոկոս
4	Մեկ փոխառուի, խոշոր փոխառուների գծով ռիսկի առավելագույն չափը (չափերը)	
Ն3/1	մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը	ընդհանուր կապիտալի 20 տոկոս
Ն3/2	խոշոր փոխառուների գծով ռիսկի առավելագույն չափը	ընդհանուր կապիտալի 500 տոկոս
5	Բանկի հետ կապված մեկ անձի, բոլոր անձանց գծով ռիսկի առավելագույն չափը (չափերը)	
Ն4/1	բանկի հետ կապված մեկ անձի գծով ռիսկի առավելագույն չափը	5 տոկոս
Ն4/2	բանկի հետ կապված բոլոր անձանց գծով ռիսկի առավելագույն չափը	20 տոկոս

ՀՀ առևտրային բանկերի կողմից միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները հրապարակվում են ՀՀ ԿԲ խորհրդի 10.07.2007 թ. 205-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների օրինակելի ձևերի լրացման ցուցումները» կանոնակարգ 3-ի պահանջների հիման վրա, ըստ որոնց սահմանվում են բանկերի հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների օրինակելի ձևերը և դրանց լրացման ցուցումները, որոնք կիրառվում են ՀՀ տարածքում գործող բանկերի և

¹² Տե՛ս ՀՀ ԿԲ խորհրդի 09.02.2007 թ. թիվ 39-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ի հիմնադրույթները, <https://www.cba.am/am/SitePages/regbanks.aspx>

¹³ ՀՀ ԿԲ խորհրդի 09.02.2007 թ. թիվ 39-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները», կանոնակարգ 2, գլուխ IV, «Բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները և դրանց սահմանաչափերը», <https://www.cba.am/am/SitePages/regbanks.aspx>

¹⁴ ՀՀ ԿԲ խորհրդի 15.11.2022 թ. թիվ 195-Ն որոշմամբ 14.12.2022 թ-ից գործում է 6.2% սահմանաչափը:

¹⁵ ՀՀ ԿԲ խորհրդի 15.11.2022 թ. թիվ 195-Ն որոշմամբ 14.12.2022 թ-ից գործում է 8.3% սահմանաչափը:

օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի կողմից հրապարակվող ֆինանսական հաշվետվությունները կազմելիս¹⁶:

Ա. Սարգսյանի և Կ. Առաքելյանի «Տնտեսագիտության վերլուծության տեսություն» ուսումնական ձեռնարկում¹⁷ ներկայացված համեմատությունների, խմբավորումների և հաշվեկշռային ավանդական եղանակները հիմք են ընդունվել սույն հետազոտական աշխատանքի կատարման համար:

Է. Աղաբեկյանն իր «Կենտրոնացումները՝ որպես կապիտալի շուկայի զարգացման խոչընդոտ» գիտական հոդվածում հանգամանալից անդրադարձել է ՀՀ կապիտալի շուկայում առկա կենտրոնացումների ձևավորման պատճառներին և շուկայի զարգացման խոչընդոտներին: Հոդվածագիրը բացահայտել է կապիտալի շուկայում բանկերի մասնակցության գերակայության պատճառները¹⁸:

«Հայաստանի ֆինանսական համակարգի կայունության և դրամավարկային քաղաքականության մի քանի հարցի շուրջ» գիտական հոդվածում Մ. Ավետիսյանը ներկայացրել է ֆինանսական կայունության դերն ինչպես զրբալ տնտեսական քաղաքականության, այնպես էլ առանձին երկրների համար որպես արդյունավետ տնտեսական քաղաքականության կարևոր նախապայման: Հոդվածում քննարկվել են դրամավարկային և մակրոպրոդեկցիալ քաղաքականությունների հիմնական ցուցանիշների փոփոխությունները, վերլուծվել են ֆինանսական կայունության ցուցանիշները¹⁹:

Վ. Բաբայանը «Բանկային գործի հիմունքներ» ուսումնական ձեռնարկում ներկայացրել է բանկային գործի էությունը և վերջինիս դիտակետից բացահայտել բանկային ռիսկերը և դրանց առանձնահատկությունները: Հեղինակն իր աշխատությունում անդրադարձ չի կատարել առանձին բանկերի գործունեությանը, այլ աշխատանքը կառուցել է մակրոմակարդակում²⁰:

Գ. Թառումյանի «Բանկերի ֆինանսական վերլուծության հիմունքները» աշխատությունում ներկայացված են ֆինանսական վերլուծության մեթոդները, մասնավորապես՝ Պորտերի հինգ գործոնների մեթոդը, ինչպես նաև հանգամանալից դիտարկվել է բանկերի գործունեության գնահատման CAMELS համակարգը, որը, սակայն, չի ներկայացվել առանձին բանկերի օրինակով²¹:

¹⁶ Տե՛ս ՀՀ ԿԲ խորհրդի 26.02.2008 թ. թիվ 50-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը», կանոնակարգ 3, <https://www.cba.am/am/SitePages/regbanks.aspx>

¹⁷ Տե՛ս **Սարգսյան Ա.Զ., Առաքելյան Կ.Ս.**, Տնտեսագիտության վերլուծության տեսություն, ուսումնական ձեռնարկ, Եր., «Տնտեսագետ», 2010, 240 էջ:

¹⁸ Տե՛ս **Աղաբեկյան Է.**, Կենտրոնացումները՝ որպես կապիտալի շուկայի զարգացման խոչընդոտ, Եր., «Բանբեր ՀՊՏՀ», 4(60), 2020, էջ 62-83, <https://asue.am/upload/files/science/banber/2020-year-4/4.pdf>

¹⁹ Տե՛ս **Ավետիսյան Մ.**, Հայաստանի ֆինանսական համակարգի կայունության և դրամավարկային քաղաքականության մի քանի հարցի շուրջ, Եր., «Բանբեր ՀՊՏՀ», 4(60), 2020, էջ 84-97, <https://asue.am/upload/files/science/banber/2020-year-4/5.pdf>

²⁰ Տե՛ս **Բաբայան Վ.**, Բանկային գործի հիմունքներ, ուսումն. ձեռն., Եր., «Տիգրան Մեծ», 2003, 100 էջ:

²¹ Տե՛ս **Թառումյան Գ.**, Բանկերի ֆինանսական վերլուծության հիմունքները, ուսումն. ձեռն., Եր., «Տիգրան Մեծ», 2003, 84 էջ:

Հետազոտության մեթոդաբանություն: ՀՀ առևտրային բանկերի կողմից հրապարակված միջանկյալ հաշվետվություններում գետեղված ֆինանսական հիմնական ցուցանիշների վերլուծության միջոցով բացահայտվել են ուշագրավ իրադարձությունները, փորձագիտական մեթոդով գնահատվել է դրանց էությունը:

Կիրառվել են տնտեսական գործունեության վերլուծության ավանդական եղանակները, մասնավորապես՝ համեմատությունների, խմբավորումների, պատմական և տրամաբանական զուգակցման, վիճակագրական եղանակները:

➤ **Համեմատությունների եղանակի** միջոցով բացահայտվել են ՀՀ առևտրային բանկերի հրապարակած միջանկյալ հաշվետվություններում ընդգրկված ֆինանսական հիմնական ցուցանիշների փոփոխությունները, զարգացման միտումներն ու օրինաչափությունները:

Համեմատությունները կատարվել են երկու մակարդակով.

1. ուսումնասիրվող տնտեսական նորմատիվների,
2. ՀՀ առևտրային բանկերի շահութաբերությունը բնութագրող հիմնական ցուցանիշների:

Համեմատական վերլուծության ընթացքում կիրառվել են դրա հետևյալ տեսակները.

- հորիզոնական վերլուծություն, որի միջոցով որոշվել են նախորդ հաշվետու ժամանակաշրջանի վերջնարդյունքների համեմատությամբ փաստացի ցուցանիշի բացարձակ և հարաբերական շեղումները,
- ուղղահայաց վերլուծություն, որի միջոցով բացահայտվել է ցուցանիշների կառուցվածքը, ինչպես նաև յուրաքանչյուր բանկի համապատասխան ցուցանիշի մասնակցությունը ընդհանուրում՝ ըստ տեսակարար կշիռների,
- տրենդային վերլուծություն, որի միջոցով, երկու տարվա կտրվածքով, ըստ դինամիկայի, իրականացվել է ցուցանիշների համադրում՝ նպատակ ունենալով որոշելու զարգացման միտումները:

➤ **Խմբավորումների եղանակի միջոցով** ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված տնտեսական նորմատիվները ներկայացվել են հետևյալ խմբերի տեսքով.

- **Համարժեքության ռիսկի կառավարման նորմատիվներ**
Սույն նորմատիվները գնահատում են, թե նորմատիվային սեփական՝ ընդհանուր կապիտալը որքանով է ունակ ծածկելու բանկի կողմից ակտիվային գործառնությունների արդյունքում ստանձնած գործառնական, վարկային և շուկայական ռիսկերը:
- **Իրացվելիության ռիսկի կառավարման նորմատիվներ**
Իրացվելիության նորմատիվների միջոցով ՀՀ ԿԲ-ն կառավարում է ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր և ընթացիկ իրացվելիության ռիսկերը՝ այդպիսով կանխարգելելով անվճարունակության ռիսկի ի հայտ գալու հավանականությունը:
- **Մեկ կամ խոշոր փոխառուների գծով ռիսկերի կառավարման նորմատիվներ**
Խոշոր փոխառուների գծով ռիսկերի կառավարման տնտեսական նորմատիվների միջոցով ՀՀ ԿԲ-ն կառավարում է խոշոր փոխառուներից բանկի կախվածության ռիսկը, այդպիսով ապահովում է բանկի

գործունեության անընդհատությունը և բանկային համակարգի հուսալիությունն ու կայունությունը:

- **Կապված անձանց գծով ռիսկի կառավարման նորմատիվներ**

Կապված անձանց գծով ռիսկի կառավարումն ուղղված է բանկի նշանակալից մասնակցություն ունեցող անձանց, ղեկավարների և նրանց հետ փոխկապված անձանց կողմից բանկից ստացած փոխառությունների գծով ռիսկերի կառավարմանը և բանկի հաճախորդների շահերի պաշտպանությանը:

ՀՀ առևտրային բանկերի միջանկյալ ֆինանսական հաշվետվություններում ընդգրկված տվյալների վերլուծության միջոցով բացահայտվել են շեղումները, որոնք խմբավորվել են, և գնահատվել է դրանց ազդեցությունը ՀՀ առևտրային բանկերի ռիսկերի ձևավորման վրա:

Խմբավորումներն իրականացվել են պարզ՝ մեկ հատկանիշով, ինչպես բացարձակ, այնպես էլ հարաբերական մեծություններով:

➤ **Փորձագիտական գնահատման մեթոդի** հիման վրա ներկայացվում են ՀՀ ԿԲ-ի կողմից ՀՀ առևտրային բանկերի ռիսկերի կառավարման նպատակով սահմանված տնտեսական նորմատիվների էությունը և առանձնահատկությունները:

Հետազոտության տիրույթում ընդգրկվել են ՀՀ բանկային համակարգի, մասնավորապես՝ 18 առևտրային բանկերի.

1. ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից Կանոնակարգ 2-ով սահմանված հիմնական տնտեսական նորմատիվների փաստացի ցուցանիշները:
2. Շահութաբերության, մասնավորապես՝ «Շահույթ», «ROE» և «ROA» ցուցանիշների վերլուծությունը:

«ROE» և «ROA» ցուցանիշների հաշվարկում որպես հիմք են ընդունվել ՀՀ առևտրային բանկերի հաշվեկշռային ընդհանուր կապիտալի ցուցանիշները: ROE ցուցանիշը ցույց է տալիս մեկ միավոր կապիտալի, իսկ ROA ցուցանիշը՝ մեկ միավոր ակտիվի ստեղծած շահույթը:

Վերլուծություն

ՀՀ առևտրային բանկերի ֆինանսական հիմնական, այդ թվում՝ տնտեսական նորմատիվները բնութագրող փաստացի ցուցանիշների վերլուծության նպատակն է բացահայտել 2023 թվականի առաջին կիսամյակի ֆինանսական հիմնական ցուցանիշների շեղումները, միտումները և օրինաչափությունները: Այնուհետև, փորձագիտական գնահատման մեթոդի հիման վրա, մեկնաբանել դրանց էությունը և առանձնահատկությունները՝ հնարավորություն տալով բանկերի հնարավոր հաճախորդներին ինքնուրույն կառավարելու իրենց ներդրումային ռիսկերը:

«Հ առևտրային բանկերի շահութաբերությունը բնութագրող հիմնական ցուցանիշների համեմատական վերլուծություն»²²

Բանկի անվանումը	Շահութաբերության ցուցանիշներ															
	Շահույթ, հազ. Դրամ						ROE					ROA				
	2023 թ. առաջին կիսամյակ		2022 թ. առաջին կիսամյակ		շեղում /1-3/		30.06.23	31.03.23	30.06.22	31.03.22	շեղում /7-9/	30.06.23	31.03.23	30.06.22	31.03.22	շեղում /12-14/
	30.06.2023	31.03.2023	30.06.2022	31.03.2022	գումար	Տ/Կ										
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
1 «Ինեկորբանկ» ՓԲԸ	12,839,410	6,783,236	9,986,843	3,166,630	2,852,567	29%	2.4%	8.15%	2.30%	5.10%	0.10%	16.80%	1.32%	15.90%	0.76%	0.90%
2 «ԲԻԲԼՈՍ Բանկ» ՓԲԸ	702,810	273,528	430,572	227,888	272,238	63%	0.7%	0.89%	0.40%	0.80%	0.20%	2.20%	0.27%	1.40%	0.22%	0.80%
3 «Այդիբանկ» ՓԲԸ	7,564,136	3,518,329	6,238,936	1,450,431	1,325,200	21%	2.4%	5.65%	2.70%	3.10%	-0.40%	11.40%	1.12%	12.10%	0.69%	-0.80%
4 «Ամերիաբանկ» ՓԲԸ	21,672,868	11,316,721	19,109,577	7,504,679	2,563,291	13%	1.7%	6.83%	1.70%	5.50%	0.00%	12.30%	0.87%	13.00%	0.67%	-0.80%
5 «Ակրա-բանկ» ԲԲԸ	11,614,304	4,906,627	10,658,183	3,014,151	956,121	9%	1.7%	4.21%	1.90%	3.30%	-0.20%	9.90%	0.72%	11.20%	0.54%	-1.30%
6 «Արցախբանկ» ՓԲԸ	3,102,034	1,541,785	3,470,318	745,503	-368,284	-11%	1.7%	2.68%	1.80%	1.50%	-0.10%	5.20%	0.83%	6.70%	0.38%	-1.40%
7 «ՎՏԲ-Հայաստան» ՓԲԸ	2,489,278	-1,859,292	-360,694	-631,847	2,849,972	-790%	1.0%	-3.79%	-0.10%	-1.30%	1.20%	4.90%	-0.77%	-0.70%	-0.21%	5.60%
8 «Յոնիբանկ» ԲԲԸ	5,052,114	2,076,008	3,973,917	210,395	1,078,197	27%	1.6%	5.73%	1.40%	0.70%	0.20%	12.90%	0.65%	11.60%	0.08%	1.30%
9 «Էվոկաբանկ» ՓԲԸ	6,212,379	3,934,201	13,421,394	1,184,668	-7,209,015	-54%	1.7%	6.24%	4.90%	3.40%	-3.20%	9.60%	1.11%	26.40%	0.46%	-16.80%
10 «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ	466,583	380,382	426,835	368,401	39,748	9%	0.1%	0.24%	0.10%	0.20%	0.00%	0.30%	0.04%	0.30%	0.04%	0.00%
11 «Մեյլաթբանկ» ՓԲԸ	2,634,913	1,033,517	1,860,055	972,067	774,858	42%	2.9%	2.16%	1.90%	2.20%	1.10%	5.30%	1.12%	4.10%	1.01%	1.20%
12 «Կոնվերսբանկ» ՓԲԸ	7,601,923	4,815,728	5,711,002	1,255,392	1,890,921	33%	1.7%	7.09%	1.50%	2.40%	0.20%	11.10%	1.00%	10.20%	0.31%	0.90%
13 «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ	6,736,379	3,171,767	4,219,271	2,128,047	2,517,108	60%	2.3%	5.44%	1.60%	4.30%	0.70%	12.00%	1.12%	8.30%	0.75%	3.70%
14 «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ	4,673,715	2,027,239	2,857,231	1,077,648	1,816,484	64%	1.1%	3.91%	0.80%	2.40%	0.30%	8.00%	0.50%	6.30%	0.29%	1.70%
15 «Արդշինբանկ» ՓԲԸ	38,218,235	16,698,550	20,113,311	4,609,296	18,104,924	90%	2.5%	10.28%	1.80%	4.30%	0.80%	22.90%	1.13%	16.70%	0.44%	6.30%
16 «Արմսփիլբանկ» ՓԲԸ	2,123,000	888,142	3,165,547	1,600,597	-1,042,547	-33%	0.5%	1.69%	0.80%	3.10%	-0.30%	3.50%	0.23%	6.50%	0.41%	-2.90%
17 «Արարատբանկ» ԲԲԸ	6,260,694	3,963,141	5,907,757	1,889,119	352,937	6%	1.7%	7.53%	1.90%	4.60%	-0.20%	10.40%	1.08%	13.80%	0.66%	-3.30%
18 «Ֆասթ բանկ» ՓԲԸ	2,021,824	1,611,806		-	0	2612%	2.3%	3.11%				4.00%	1.95%			
Ընդամենը	141,986,599	67,081,415	111,190,055	30,773,065	30,796,544	28%	1.7%	4.89%	1.50%	2.80%		10.0%	0.79%	9.77%	0.43%	

²² Վերլուծությունը կատարել է հեղինակը՝ որպես հիմք ընդունելով ՀՀ առևտրային բանկերի կողմից նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով հրապարակված միջանկյալ հաշվետվությունների տվյալները:

Աղյուսակ 2-ում ներկայացված ցուցանիշների համեմատական վերլուծության արդյունքում կարող ենք նշել, որ ՀՀ առևտրային բանկերը 2023 թվականի առաջին կիսամյակում գործել են արդյունավետ և ստացել են մոտ 142 մլրդ դրամի շահույթ, որը կազմել է 2022 թվականի ՀՆԱ 1,67%-ը: Նախորդ տարվա հաշվետու նույն ժամանակահատվածի նկատմամբ շահույթի աճը կազմել է մոտ 28% կամ 30,7 մլրդ դրամ:

Ուշագրավ է «Արդշինբանկ» ՓԲԸ շահույթի ցուցանիշը, որը նախորդ տարվա առաջին կիսամյակի նկատմամբ աճել է 90%-ով կամ 18,1 մլրդ դրամով և կազմել 38,2 մլրդ դրամ:

Շահույթի ցուցանիշի կտրուկ նվազում է արձանագրվել «Էվոկաբանկ» ՓԲԸ-ում՝ մոտ 54%-ով կամ 7.2 մլրդ դրամով:

Միաժամանակ հարկ է նշել, որ «Էվոկաբանկ» ՓԲԸ-ն 2023 թվականի առաջին կիսամյակի գործունեության արդյունքում ստացած շահույթով ՀՀ առևտրային բանկերի շարքում զբաղեցնում է 9-րդ հորիզոնականը:

Վերոհիշյալ բանկերի հաշվետու ժամանակաշրջանների եկամուտների և ծախսերի համեմատական վերլուծությունը ներկայացվում է աղյուսակի միջոցով:

Աղյուսակ 3

ՀՀ առևտրային բանկերի 2022-2023 թթ.առաջին կիսամյակի եկամուտների և ծախսերի տարեկան փոփոխությունների համեմատական վերլուծություն²³

հազ. դրամ

ԱՆՎԱՆՈՒՄ	«Էվոկաբանկ» ՓԲԸ			«Արդշինբանկ» ՓԲԸ		
	2023	2022	շեղում	2023	2022	շեղում
Տոկոսային և նմանատիպ եկամուտ.	13,125,963	9,602,914	3,523,049	52,156,951	38,748,114	13,408,837
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	6,237,676	5,679,210	558,466	21,121,327	23,350,747	(2,229,420)
Զուտ տոկոս. և նմանատիպ եկամ.	6,888,287	3,923,704	2,964,583	31,035,624	15,397,367	15,638,257
Կոմիսիոն և այլ վճարն. տեսքով եկամ.	3,984,197	2,671,526	1,312,671	9,101,376	7,828,081	1,273,295
Կոմիս. և այլ վճարն. տեսքով ծախս.	2,790,307	1,750,284	1,040,023	2,238,201	1,368,855	869,346
Ստացված զուտ կոմիս. և այլ վճարն.	1,193,890	921,242	272,648	6,863,175	6,459,226	403,949
Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից	3,252,217	15,372,868	(12,120,651)	16,724,887	21,117,975	(4,393,088)
Այլ գործառնական եկամուտներ	553,689	483,070	70,619	2,045,229	1,449,184	596,045
Գործառնական եկամուտներ	3,805,906	15,855,938	(12,050,032)	18,770,116	22,567,159	(3,797,043)
Զուտ մասհանումներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին	838,141	2,158,281	(1,320,140)	2,238,375	11,354,780	(9,116,405)
Ընդհանուր վարչական ծախսեր	1,882,506	1,189,476	693,030	5,347,514	4,287,476	1,060,038
Այլ գործառնական ծախսեր	1,852,584	1,191,126	661,458	4,995,164	3,737,246	1,257,918
Շահույթը / (վնասը) մինչև հարկումը	7,314,852	16,162,001	(8,847,149)	44,087,862	25,044,250	19,043,612
Շահութահարկի գծով ծախս (փոխհատ.)	1,102,473	2,740,607	(1,638,134)	5,869,627	4,930,939	938,688
Շահույթը (վնասը) հարկումից հետո	6,212,379	13,421,394	(7,209,015)	38,218,235	20,113,311	18,104,924
Այլ համապարփակ եկամուտ	922,403	771,693	150,710	831,652	1,479,992	(648,340)
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ, վերագնահատումներ	937,109	801,917	135,192	797,983	796,016	1,967
Դրամական հոսքերի հեջավորում	(14,329)	1,956	(16,285)	33,669	(1,297,065)	1,330,734
Հիմնական միջոցների վերագնահատումներից օգուտներ	(377)	(32,180)	31,803		1,981,041	(1,981,041)
Այլ համապարփակ եկամտի գծով շահութահարկ	(168,612)	(144,697)	(23,915)			-
Այլ համապարփակ եկամուտ հարկումից հետո	6,966,170	14,048,390	(7,082,220)	39,049,887	21,593,303	17,456,584

²³ Աղբյուրը՝ ՀՀ առևտրային բանկերի կողմից սահմանված կարգով հրապարակված միջանկյալ հաշվետվություններում ընդգրկված տեղեկություններ, <https://www.cba.am/am/SitePages/fscfobanks.aspx>

2023 թվականի առաջին կիսամյակի արդյունքներով ROE-ի և ROA-ի գծով լավագույն արդյունք արձանագրած բանկերի ցուցանիշները ներկայացվում են աղյուսակի միջոցով²⁴:

Աղյուսակ 4

Դիտարկվող հաշվետու ժամանակաշրջաններում ROE և ROA ցուցանիշների գծով առաջին երեք հորիզոնականները զբաղեցնող բանկերը

ROE				ROA			
30.06.23		30.06.22		30.06.23		30.06.22	
Բանկի անվ.	%	Բանկի անվ.	%	Բանկի անվ.	%	Բանկի անվ.	S/Կ
«Մելլաթբանկ» ՓԲԸ	2.9%	«Էվոկաբանկ» ՓԲԸ	4.9%	«Արդշինբանկ» ՓԲԸ	22.9%	«Էվոկաբանկ» ՓԲԸ	26.4%
«Արդշինբանկ» ՓԲԸ	2.5%	«ԱյԴիԲանկ» ՓԲԸ	2.7%	«Ինեկոբանկ» ՓԲԸ	16.8%	«Արդշինբանկ» ՓԲԸ	16.7%
«Ինեկոբանկ» ՓԲԸ	2.4%	«Ինեկոբանկ» ՓԲԸ	2.3%	«Յունիբանկ» ԲԲԸ	12.9%	«Ինեկոբանկ» ՓԲԸ	15.9%

ՀՀ առևտրային բանկերի նորմատիվային կապիտալի ընդհանուր գումարը 30.06.2023 թ. դրությամբ կազմել է 1.346,0 մլրդ դրամ կամ ՀՆԱ 15,3%-ը, որը նախորդ հաշվետու ժամանակաշրջանի նկատմամբ աճել է մոտ 25 տոկոսով²⁵: ՀՀ բանկային համակարգի նորմատիվային կապիտալի աճի մոտ 21 տոկոսը կամ մոտ 78 մլրդ դրամը բաժին է ընկնում երկու բանկերին, մասնավորապես՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ-ին՝ 47.6 մլրդ դրամ և «Արդշինբանկ» ՓԲԸ-ին՝ 30,5 մլրդ դրամ: «Ամերիաբանկ» ՓԲԸ 47.6 մլրդ դրամ աճի գերակշիռ մասը բաժին է ընկնում բանկի կողմից ներգրավված երկարաժամկետ ստորադաս փոխառություններին²⁶, իսկ «Արդշինբանկ» ՓԲԸ նորմատիվային կապիտալի աճի 30,5 մլրդ դրամի 60%-ը՝ 2023 թվականի առաջին կիսամյակի գործունեության արդյունքում ստացած շահույթին:

ՀՀ առևտրային բանկերի կապիտալի համարժեքության տնտեսական նորմատիվների փաստացի ցուցանիշների համեմատական վերլուծության արդյունքում հատկանշական են՝

Ա11 - հիմնական կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև սահմանային հարաբերակցության նվազագույն 9%-ին (14.12.2022 թ-ից՝ 6.2%).

- մոտ է «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ ցուցանիշը, որը նախորդ հաշվետու ժամանակաշրջանի նկատմամբ նվազել է 2.3 տոկոսային կետով և կազմել 10.5 տոկոս,
